

ԳԵՂԱՄՍ

ՀԵՐԱՐԷ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 30 հոկտեմբերի 2025թ. թիվ 21(625)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՏ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գեղարքունիքի մարզը ֆրանսիական կողմի հետ մինչ այժմ իրականացված կրթական, առողջապահական, մշակութային, զբոսաշրջային ծրագրերի կողքին ավելացնում է նաև գյուղատնտեսական ոլորտի ուղղությամբ մեկնարկող համագործակցային ծրագրերը:

Վերջերս Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Օվեռն-Ռոն-Ալպեր տարածաշրջանի եւ Իզերի Գյուղատնտեսական պալատի փորձագետներին՝ Գեղարքունիք-Իզեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակում:

Ֆրանսիացի գյուղատնտեսական ոլորտի փորձագետներ Վալերի Մորիե-Ժենուն եւ Թոմաս Հուվերը 6-օրյա աշխատանքային այցով մարզ են ժամանել ուսումնասիրելու համագործակցության հնարավորությունները եւ կիսվելու իրենց փորձով:

Հանդիպման ընթացքում մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել հյուրերին՝ այցի եւ կառուցողական ներդրավածության համար կարելուց միջազգային փորձի փոխանակման



անհրաժեշտությունը:

Քննարկումների ընթացքում կողմերը նախանշել են հնարավոր կոնկրետ ծրագրեր ու նախաձեռնություններ՝ ուղղված մարզում գյուղատնտեսության

կայուն եւ ժամանակակից զարգացմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ֆերմերների ներուժի բացահայտմանն ու նրանց մասնագիտական կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև ֆերմերային կրթության նոր ձեւաչափերի ներդրմանը:

Ֆրանսիացի մասնագետները հանդիպել են Գեղարքունիքի տարբեր համայնքների ֆերմերների եւ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ, տեղում գնահատել կարիքները եւ համագործակցության հնարավոր ուղղությունները: Նրանք նաև իրականացրել են վերապատրաստումներ համայնքապետարանների գյուղատնտեսության ոլորտի մասնագետների համար:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը շարունակաբար աշխատում է խթանելու մարզի գյուղատնտեսական ներուժը, զարգացնելու համատեղ նախաձեռնություններ եւ ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք կբերեն ժամանակակից, արդյունավետ ու կայուն գյուղատնտեսության ձեւավորմանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԱՋԱՀԵՐԹ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ



Հոկտեմբերի 17-ին կայացավ Գեղարքունիքի մարզի խորհրդի հերթական նիստը, որով վարեց Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը:

Նիստի օրակարգում քննարկվեց առաջնահերթ ու կարելուր նշանակության յոթ հարց, որոնք վերաբերում էին 2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մարզի ֆինանսական, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինության եւ հողաշինության, կրթության, մշակույթի եւ սպորտի, առողջապահության եւ սոցիալական, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման ոլորտներում իրականացված աշխատանքներին ու առաջիկա անելիքներին:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ Է ԲԱՅ ԹՈՂՎԵԼ ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻ» ՏԵՍԱԿԻ 324 ՀԱՋԱՐ 824 ՄԱՆՐԱԶՈՒԿ

Հոկտեմբերի 17-ին Սեւանա լիճ է բաց թողնվել «Սեւանի իշխան» ՓԲԸ-ի Կարճաղբյուրի ձկնաբուծական գործարանում վերարտադրված Սեւանի իշխանի «Գեղարքունի» ենթատեսակի 324,824 հատ մանրածուկ՝ 6.5 գրամ միջին քաշով:

Բացթողման նպատակն է պահպանել եւ ավելացնել Սեւանի լճի համար յուրահատուկ այս ձկնատեսակի պաշարները:

Միջոցառմանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը, ինչպես նաև ՇՄՆ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, «Սեւան Ազգային պարկ»-ի, Էկոպարեկային ծառայության եւ բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Միջոցառմանը ներկա են եղել նաև Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտները եւ մանկավարժները: Բացթողումն իրականացվել է Կարճաղբյուր գյուղի հատվածից:



Այս նախաձեռնությունը եւս մեկ կարելուր քայլ է Սեւանի էկոհամակարգի վերականգնման եւ իշխանի պաշարների պահպանման գործում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ԲԵՐԴԿՈՒՆԻՔԻ ԱՄՐՈՑԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՔՐԻՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք գյուղում ավարտվել են Բերդկունքի ամրոցի պեղումները, որոնք սկսվել էին այս տարվա հոկտեմբերի սկզբից, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արժեքների պահպանության միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ հնագիտական արշավախմբի կողմից:

Հնագիտական արշավախմբի անդամ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արժեքների պահպանության միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ հուշարձանների պահպանության բաժնի գլխավոր մասնագետ, հնագետ Լեւոն Մկրտչյանի տեղեկացմամբ՝ պեղումները տվել են նկատելի եւ հետաքրքիր արդյունքներ:

Աշխատանքներն իրականացվել են պարսպապատի հյուսիսարեւելյան հատվածում եւ հրվանդանի ափամերձ բարձունքում:

Պարսպապատի շարունակության բացման աշխատանքներում տեսանելի են դարձել եւս մեկ բրգաշտարակի հիմնապատեր: Պարսպապատը, ըստ օդայուսանկարների, տեղ-տեղ պահպանված հատվածներով շարունակվում է դեպի արեւմուտք: Այն հնարավոր կլինի բացել հետագա պեղումներով:

Առափնյա հրվանդանում հայտնաբերվել են քառապատույզ ճրագաման, խեցեղեն բեկորներ եւ վանակատից ցլեպներ: Ըստ նախնա-

կան ուսումնասիրությունների՝ հայտնաբերված նյութը վերաբերում է երկաթի դարից մինչեւ զարգացած միջնադար ժամանակահատվածին:

Պեղումների արդյունքում բացվել է նաև ժայռափոր թաղում՝ անհատի ոսկորներով եւ երկու ամբողջական ծովախեցիով, - ներկայացրեց Լեւոն Մկրտչյանը:

Ցամաքային պեղումներից զատ իրականացվել են



նաև ստորջրյա հնագիտական աշխատանքներ: Ստորջրյա ուսումնասիրություններն արվել են Սեւանա լճի գաղտնիքները բացահայտող սուզորդ Աննա Մարտիրոսյանի օգնությամբ եւ հնագետ, արշավախմբի անդամ Լեւոն Մկրտչյանի մասնակցությամբ:

Խնդիր էր դրված՝ որոնել լճից դեպի բերդ տանող որել՝ եւ մարդկային կենսագործունեության որել հիշատակում (հաշվի են առնվել նաև տեղացիների պատմություններն ու հիշողությունները): Դիտարկվել է Բերդի հարավային կողմից դեպի հյուսիս մոտ 10000 քմ ստորջրյա տարածք (ափի երկայնքով մոտ 500 մ.): Ստորջրյա աշխատանքներ են իրականացվել 3-7 մ. խորություններում:

Ուսումնասիրության արդյունքում 3-5 մ. խորություններում հայտնաբերվել է որմնասյուն հիշեցնող բեկոր, որից էլ մի քանի մետր դեպի արեւելք գտնվել է քանդակի բեկոր: Ակնհայտ է, որ գտածոներն իրենց նախնական տեղում չեն: Դիտարկված տարածքում մշմարվել են քարաբեկորներ, որոնց տաշվածքը ենթադրում է մարդկային գործունի ազդեցություն, գրույցն ամփոփեց պեղող հնագետը:

Բերդկունքի ամրոցի պեղումները 2025 թվականի համար արդեն համարվում են ավարտված:

Խոսրով Խլղաթյան

**ԱՐՏՅՈՒՄ ՄՈՒԽՄԱՆԸ ՊԱՐԱԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ**

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի սան Արտյոմ Մուխսյանը վերջերս Եգիպտոսում կայացած պարաժամանարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի հավաքականի կազմում արծաթե մեդալ է նվաճել:

Պարաժամանարտի աշխարհի առաջնությանը Արտյոմը հանդես է եկել 65 կգ քաշային կարգում եւ ձգում պառկած դիրքով վարժությանը՝ բարձրացրած քաշի եւ մոտեցումների հանրագումարի արդյունքում նվաճել արծաթե մեդալ: Մրցաշարին մասնակցել են վեց տասնյակից ավելի երկրներ:

Միջազգային մրցասպարեզում սա Արտյոմի երկրորդ ձեռքբերումն է. այս տարվա մայիսին Վրաստանի Թբիլիսի քաղաքում նա մասնակցեց աշխարհի գավաթի 2025 թվականի առաջնությանը եւ ոսկե մեդալակիր դարձավ: Մարզիկի հաջողությունների գործում մեծ ներդրում ունեն մարզիչ Ժորա Յովհաննիսյանը, ընտանիքի անդամները, բոլոր այն մարդիկ, ովքեր աջակցում եւ ոգևորում են:

-Մենք ծնողներով շատ հպարտ ենք, որ մեր որդին



հաղթանակներ է տանում միջազգային հարթակներում, որ բարձր է պահում իր ծննդավայրի անունն ու պատիվը: Միաժամանակ մեր երախտագիտությունն ենք հայտնում նրա մարզչին, նաեւ՝ Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանին՝ ցուցաբերած բարոյական ու նյութական խրախուսանքների համար,- նշել է Արտյոմի հայր Դավիթ Մուխսյանը:

Առկա ձեռքբերումներով, սակայն, Արտյոմը չի պատրաստվում սահմանափակվել: Մարզիչ Ժորա Յովհաննիսյանի հետ նա շարունակելու է պարապմունքները՝ պարաժամանարտում հաջողությունները բազմապատկելու նպատակադրմով:

Գավառի համայնքապետարանում եւ Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցում շուրջ են դիմավորել միջազգային հարթակում հաղթանակ ապահոված Արտյոմ Մուխսյանին:

Ավարդ Մանուկյան

**ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԻ-ԱԿԱՆ
ՄԱՐՏԱՐՎԵՍԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



քաղաքում:

Համառուսաստանյան երիտասարդական մարտարվեստի առաջնությունում, որը կայացել է վերջերս, Էլենը 50 կգ քաշային կարգում դարձել է 1-ին մրցանակակիր:

Հայաստանի հավաքականը ներկայացնող 14 մարզիկներից միայն Էլենն է արժանացել ոսկե մեդալի:

Մարզիչ Անդրանիկ Հակոբյանի սանն աչքի է ընկել բարձր պատրաստվածությամբ եւ կամային որակներով, որի արդյունքն էլ հերթական սպասված հաղթանակն էր:

Արդեն 9 տարի էլ ենք այս մարզաձևի գաղտնիքներն է վերծանում, իսկ ամեն ինչ սկսվեց այն ժամանակ, երբ Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց այցելած մարզիչը «Կյուլուշին կարատե»

մարզաձևի խումբը համալրելու համար հավաքագրում էր երեխաների: Էլենը որոշեց իր ուժերը փորձել այդ մարզաձևում, սակայն չէր էլ մտածում, որ այդքան երկար կձգվի իր մարզական կյանքը: Առջեւում նոր առաջնություններ են, որոնց էլ ենք պատրաստվում է ամենայն պատասխանատվությամբ:

Արմինե Դուկասյան

**ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ԵՐԿՐՈՒ ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ
ՄԵԴԱԼՈՎ ԵՆ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԼՈՆԴՈՆԻՄ ԿԱՅԱՑԱԾ
ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ**

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Չորագյուղ գյուղի պատանի երկու մարզիկ ոսկե եւ արծաթե մեդալով են տուն վերադարձել Լոնդոնում կայացած «Այկիդո» կարատեի աշխարհի առաջնությունից:

2025 թվականի հոկտեմբերի 8-ից 14-ը Լոնդոնում կայացել է «WKO K1» Այկիդո կարատեի աշխարհի առաջնությունը, որին ՀՀ հավաքականից մասնակցել են նաեւ Մարտունի համայնքի Չորագյուղ բնակավայրից երկու պատանի մարզիկ: Հավաքականը գլխավորում էր Հայաստանի «Այկիդո» կարատեի ֆեդերացիայի նախագահ Դավիթ Աթանեսյանը:

Թեժ մրցապայքարի արդյունքում Չորագյուղից պատանիներից ութամյա Գրիգոր Սաֆարյանը նվաճել է ոսկե մեդալ եւ հռչակվել աշխարհի չեմպիոն, իսկ իննամյա Խաչիկ Խլղաթյանը դարձել արծաթե մեդալակիր:

Սաների մարզիչ Արաքս Մարգարյանի հավաստմամբ՝ Անգլիայի առաջնությանը մասնակցում էր աշխարհի 36 պետության մոտ 3000 մարզիկ եւ մարզուհի, ուստի այդ հաղթանակը բավականին դժվար էր վաստակել:



-Մեկ տարի առաջ էլ այս երկու փոքրիկ մարզիկները Չորագյուղի հռչակը տարածեցին աշխարհով մեկ. Գերմանիայում կայացած աշխարհի առաջնության ժամանակ Գրիգոր Սաֆարյանը նվաճեց ոսկե, Խաչիկ Խլղաթյանը՝ արծաթե մեդալ: Չորագյուղը կրին շուրջով դիմավորեց իր հերոսներին,-նշեց Չորագյուղի վարչական ղեկավար Արարատ Սաֆարյանը:

«Գեղամա աշխարհ»

**ԳԱՎԱՌԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԾԱՏՐՎԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԿՐՈՐԾԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԻՑ**

Արդեն ավարտվել են Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի շատրվանային համակարգի կառուցման աշխատանքները:

Ավարտված են նաեւ շատրվանների կարգաբերման եւ փորձարկման, շատրվանային համակարգի մալուխատարների լվացման եւ ներկման, հրապարակի տարածքի վնասված սալիկների վերականգնման, կանաչ տարածքների բարեկարգման աշխատանքները:

576 թմ տարածք ընդգրկող համակարգը հագեցած է լուսաձայնային եւ շարժական հնարավորություններով, ունի աշխատանքների իրականացման եւ վերահսկման առանձին կառավարման տարածք: Իր ողջ շքեղությամբ շատրվանային համակարգը կգործի հաջորդ տարվա գարնանից:

Շատրվանային բուն համակարգը ձեռք է բերվել 2021 թվականին սուբվենցիոն ծրագրով: Իսկ համակարգի կառուցումն իրականացվում է Գավառի 2024 թվականի սուբվենցիոն ծրագրով, որի արժեքը 278 միլիոն դրամ է: Գումարի 55 տոկոսը՝ համայնքի, 45 տոկոսը պետության ներդրումն է:

Ավարդ Մանուկյան



**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ ԿԱՏԱՐՎԵԼ
Է 6540 ՀԵԿՏԱՐ ԱՇՆԱՆԱՑԱՆ**

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում 2025 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ արդեն կատարվել է 6540 հեկտար աշնանացան ցորենի ցանք:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 4350 հեկտար աշնանացան կատարվել է Վարդենիս, 710 հեկտար՝ Գավառ, 710 հեկտար՝ Մարտունի, 400 հեկտար՝ Սեւան եւ 370 հեկտար՝ ճամբարակ համայնքների տնտեսություններում:

Ցանքերի որոշ մասը կատարվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում: Մեկ հեկտար աշնանացան կատարելու դեպքում պետության կողմից տնտեսություններին տրամադրված սուբսիդիան կկազմի 80 հազար դրամ:

Աշնանացանի աշխատանքները շարունակվում են:

«Գեղամա աշխարհ»

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ
ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

/սկիզբը՝ եջ 2-ում/
Հատկապես մեծ ոգևորությամբ անցկացվեցին սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի համայնքային փուլի մրցումները, որին մասնակցեցին 115 դպրոցների 598 դպրոցականներ, իսկ եզրափակիչ փուլում Սեւանի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը զբաղեցրեց 1-ին տեղը:

Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված աշխատանքների մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Վանիկ Հարությունյանը:

Ըստ զեկուցողի՝ 2025 թվականի օգոստոսի 1-ին Սեւան համայնքից մեկնարկել է Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման կենտրոնի կողմից ծառայությունների մատուցումը Գեղարքունիքի մարզում, այնուհետ այն շարունակվել Գավառ եւ ճամբարակ համայնքներում: Մարտունու փոխքեռնման կենտրոնի շահագործումը որոշակի տեխնիկական պատճառներով ձգձգվում է, առաջիկայում այն կգործարկվի, եւ ծառայությունը Մարտունի եւ Վարդենիս համայնքների ընդգրկմամբ կդառնա ամբողջական:

Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿԿ-ի գործարկմամբ լուծվում է Սեւանի ջրահավաք ավազանի համար կարելուրագույն բնապահպանական խնդիրներ, հետեւաբար բեռնաթափվում են մարզի համայնքներում գործող թվով 19 աղբավայրեր, եւ մեր առաջնային խնդիրն է կոնսերվացնել այդ աղբավայրերը:

Ընթացիկ տարվա 9 ամսվա կտրվածքով մարզի

համայնքներում աղբահանության վարձավճարները Գավառ համայնքում հավաքագրվել են 78.9, Սեւան համայնքում՝ 79.1, Մարտունի համայնքում՝ 61.2, ճամբարակ համայնքում՝ 96.7, Վարդենիս համայնքում՝ 61.2 տոկոսով:

Նիստի աշխատանքներն ամփոփեց Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը:

-Հարկավոր է համատեղ աշխատանքով լարել ուժերը՝ տեղական բյուջեների սեփական եկամուտներն ամբողջությամբ հավաքագրելու, սուբվենցիոն եւ պետական այլ ծրագրերի ընթացքը մշտադիտարկելու եւ վերահսկելու, մյուս այլ ոլորտներում տնտեսական տարին դրական արդյունքներով փակելու համար,- նշեց Կարեն Սարգսյանը:

«Գեղամա աշխարհ»



4

Սեւան եւ Գրենորլ քաղաքների միջեւ հաստատված համագործակցության շրջանակներում ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպության միջոցներով վերանորոգվել եւ կահավորվել է Սեւան քաղաքի Ն. Դազարյանի անվան մանկական մարզադպրոցի բուժկետը, իսկ երկու մանկապարտեզների հատկացվել է ձեռքերի չորացման սարքեր:

Սեւան համայնքում ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի իրականացվել են առողջապահական ուղղվածության բազմաթիվ ծրագրեր, որոնց շնորհիվ Սեւան համայնքի նախադպրոցական եւ արտադպրոցական հաստատությունների, ինչպես նաեւ բնակավայրերը սպասարկող բուժկետները եւ բուժամբուլատորիաները վերանորոգվել են եւ վերազինվել:

Վերանորոգման հերթական հասցեն եղել է Սեւան համայնքի Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բուժկետը:

Արտադպրոցական հաստատության տնօրինության, ինչպես նաեւ հաճախող երեխաների եւ պատանիների համար բուժկետի՝ վերանորոգված եւ 1-

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՎԵԼ Է ՍԵՎԱՆԻ ՄԱՆԿԱԿԱԶՄԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԲՈՒԺԿԵՏԸ



ին բուժօգնության սարքավորումներով հագեցած լինելն անհրաժեշտություն էր, որն իրողություն է դարձել «Բժշկական օգնություն եւ զարգացում» ասոցիացիայի միջոցով քույր քաղաք Գրենորլի կողմից տրամադրված անհրաժեշտ ներդրմամբ: Այսուհետ մարզադպրոցի 2-րդ հարկում կգործի վերանորոգ-

ված եւ համապատասխան գույքով համարված բուժկետ, որտեղ առկա են բոլոր պայմանները՝ հարմարավետ տարածքներով: Վերանորոգմանը հաջորդել է կահավորումը. բուժկետին տրամադրվել են բժշկական պահարան, թախտ, գրասեղան, աթոռ, բժշկական հասակաչափ, կշեռք, 1-ին օգնության հավաքածու, դինամոմետր, ակոբեստեր, տոնոմետր:

Այս ծրագրի արդյունքում մարզական հաստատություն հաճախող երեխաների, մարզիչների համար 1-ին բուժօգնությունը կդառնա առավել հասանելի, որակյալ: Սեւան-Գրենորլ ապակենտրոնացված համագործակցության առողջապահական ծրագրերի շրջանակներում Սեւան համայնքի Ս. Պետրոսյանի անվան թիվ 2 «Ձարթոնք» եւ թիվ 4 «Գալիք» մսուրման սարքերով:

Սեւան համայնքի Ջովաբեր, Դոմաշեն, Վարսեր եւ Չկալովկա բնակավայրերի մանկապարտեզներն արդեն իսկ ստացել էին սման սարքեր՝ ըստ խմբերի թվի: Արմինե Ղուկասյան

ՄԱԴԻՆԱՅՈՒՄ ՄԵԿԵԱՐԿՈՒՄ ԵՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկում են ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները 1-ին եւ 6-րդ փողոցներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մադինայի ոռոգման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 86 միլիոն 216 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման համակարգի կառուցում մադինայի 1-ին եւ 6-րդ փողոցներում, 1600 գծամետր երկարությամբ, երկաթյա կիսախողովակներով:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2026

թվականի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Մադինայի տնտեսությունների շուրջ 70 տոկոսը եկող տարվանից ոռոգման ջուրը կստանան անկորուստ եւ ժամանակին:

Նախորդ տարում եւս մեր գյուղի առանձին թաղամասերում կառուցվեցին ոռոգման ժամանակակից համակարգեր, ու դրանց արդյունքը այս տարի հստակ երեւաց. սակավաջուր աամիսներին ջուրը տնտեսություններին մատակարարվեց ժամանակին ու անկորուստ, բնակիչները որեւէ խնդիր չունեցան, քանի որ ջրի կորուստ այդ թաղամասերում այլեւս չի լինում: Այս ծրագրով նախատեսված 1600 մետր ջրատարից մոտ 800 մետրը կառուցվելու է մայր առվի վրա, որտեղ առավել շատ էին լինում ջրի կորուստները, -ներկայացրեց Մադինայի վարչական ղեկավար Հարություն Հայրապետյանը:

«Գեղամա աշխարհ»

ԱՄՏՂԱԶՈՐՈՒՄ ԽՄԵԼՈՒ ԶՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղածոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա հունիս ամսից մեկնարկել եւ ընթանում են խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Աստղածորի վարչական ղեկավար Արթուր Ալեքսանյանի տեղեկացմամբ՝ Աստղածորի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 36 միլիոն 781 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Աստղածորի Արցախյան ազա-

տամարտիկների, 21, 30 եւ 52-րդ փողոցներում, 1510 գծամետր ընդհանուր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսից եւ հոկտեմբերի 14-ի դրությամբ իրականացվել շուրջ 70 տոկոսով:

Ծրագրի շահառու են հանդիսանում Աստղածորի վերոնշյալ փողոցների շուրջ 350 տնտեսություն:

Ծրագրի իրականացման արդյունքում վերանալու են մատակարարվող ջրի կորուստները, իսկ բնակիչներն ունենալու են մաքուր ու որակյալ խմելու ջուր:

«Գեղամա աշխարհ»



ԱՐԺՎԱՆԻՍՏՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվաճիստ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արտաքին լուսավորության ցանց է կառուցվել 19, 21 եւ 24-րդ փողոցներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Արծվաճիստի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 11 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսի կեսերից՝ եւ հոկտեմբերի 7-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Արծվաճիստի 19, 21, 24-րդ փողոցներում, 1500 մետր ընդհանուր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 41 լուսատուների տեղադրմամբ:

Վերոնշյալ փողոցների բնակիչները լուսավորության արտաքին ցանցից օգտվելու են առաջին անգամ:

Լուսավորության ցանցի շահագործումը նախատեսվում է 2025 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ԼԱՅԹԵԿ ԱԼԵՔ» ՍՊԸ-ն:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՎԱՔՎԵԼ Է 71 ՀԱԶԱՐ 630 ՏՈՆՆԱ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԲԵՐՔ, 1633,3 ՏՈՆՆԱ ՊՏՈՒՂ

Գեղարքունիքի մարզում ավարտին են մոտենում կարտոֆիլի, պտղի եւ բանջարեղենի բերքահավաքի աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2025 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի տնտեսություններում արդեն բերքահավաքը կարտոֆիլի 5566 հեկտար ցանքերում ավարտվել է շուրջ 75 տոկոսով, ինչ արդյունքում հավաքվել է 71 հազար 630 տոննա կարտոֆիլի համախառն բերք:

Նույն օրվա դրությամբ մարզի տնտեսություններ-

ում հավաքվել է 602 տոննա խնձորի, 325 տոննա այլ պտուղների, 380 տոննա ծիրանի, 227,3 տոննա կեռասի, 28,5 տոննա ելակի, 70,5 տոննա այլ հատապտուղների բերք՝ 1633,3 տոննա ընդհանուր գումարով:


Բանջարեղենի համախառն բերքը կազմել է 1379,5 տոննա՝ 158,6 տոննա լոլիկ, 145,2 տոննա վարունգ, 29,3 տոննա տաքդեղ, 1064,4 տոննա բանջարեղենի համախառնը այլ մշակաբույսեր:

Հատիկընդդեմ մշակաբույսերից ստացվել է 394, 6 տոննա համախառն բերք:

«Գեղամա աշխարհ»

ԵՐԱՆՈՍՈՒՄ ԽՄԵԼՈՒ ԶՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա սեպտեմբերի սկզբից ընթանում են խմելու ջրատարի ներ-



քին ցանցի կառուցման աշխատանքները:

Երանոսի վարչական ղեկավար Մաշա Բավեյանի տեղեկացմամբ՝ Երանոսի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 42 միլիոն 496 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:


Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Երանոսի 1-ին, 2-րդ 9-րդ, Վարդաձորի խնուղի փողոցներում ու ջրատարի արտաքին ցանցի 300 մետրանոց հատվածում՝ 3100 գծամետր ընդհանուր երկարությամբ:

2025 թվականի հոկտեմբերի 15-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտված են շուրջ 75 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»



ՎԱՂԱՇԵՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԵ ՄԱՏՈՒՆԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղի պատմությունը եւս բխում է հազարամյակների խորքից:

Այս գյուղի տարածքում այնքան հնագիտական հուշարձաններ կան, որոնք կարող էին լրացնել մի քանի մեծ երկրների հարյուրամյա կամ հազարամյա պատմություններ, սակայն դրանք մերն են, հայկական են, խորքային, բովանդակային, բացառիկ ու ինքնատիպ, որ երբեք ու ոչ մի դեպքում մեր հողի ու արյան թշնամիների կողմից չեն կարող յուրացվել, բռնազավթվել, սեփականացվել:

Այստեղ մի քանի կիկլոպյան ամրոցների ու հնագույն գյուղատեղիների ավերակներ կան, մի քանի տասնյակ միջնադարյան գեղաքանդակ խաչքարեր, նորագույն ու հնագույն եկեղեցիներ, դամբարանադաշտեր, լեռան բարձրաբերձ փեշով մեկուկես



տասնյակ կիկլոմետր ձգվող ջրանցք ու լեռնային ջրամբարներ, որոնք նույնպես մարդկանց ծառայել են հազարավոր տարիներ ու ծառայում են մինչ օրս:

Սակայն այդ բոլոր հմայքների մեջ մի ուրիշ կա-խարդական եզերք է Վաղաշենի հարավարեւելյան բարձունքին բազմած սուրբ Հռիփսիմե մատուռը:

Շրջանաձել շարվածքն արդեն հուշում է, որ այն բարձրանում է կրոնիկայի կամ խոշոր դամբարանի վրա ու պաշտամունքային կառույց է համարվում դեռեւս անհիշելի ժամանակներից: Այստեղ մինչ օրս ուխտավայր են գալիս մարդիկ, այստեղ վեր է բարձրացել նաեւ վերջերս տեղադրված մետաղակուռ ու բարձր խաչը՝ նվիրված Արցախյան պատերազմներում նահատակված հայորդիների հիշատակին:

Ի դեպ, այս նույն մատուռից քիչ հյուսիս Վաղաշենի գերեզմանոցն է, որտեղ ամփոփված են Արցախյան 44-օրյա պատերազմի վաղաշենցի ինը հերոս նահատակների աճյունները, որոնց վրա եւ բարձրանում է հուշահամալիրը:

Նռավել ցնցող են ավերակների մեջ իրար կողքի շարված միջնադարյան խաչքարերը, որոնցից մեկի վրա շատ պարզ նկատվում է Մեսրոպատառ շքեղ վայելչագիրը:

Այս խաչքարի վիմագիր տեքստը, պարզվում է, ժամանակին ընթերցել է ականավոր հնագետ, վի-



մագրագետ Սեդրակ Բարխուդարյանը: Միայն թե շփոթմամբ այն տեղադրել է Աստղածորի հուշարձանների ցանկում: Ահա տեքստի բովանդակությունը. « Ես Քրիստոս կանգնեցի խաչս թվ. ՏՉԸ 1539. »:

Այդուհանդերձ, Բարխուդարյանը շատ ճիշտ է նշում խաչքարի ու հուշարձանի տեղը՝ «Աստղածորից հարավ-արեւմուտք, երեք կիկլոմետր հեռու, բլրին գտնվող մատուռի բեմի առաջ դրված փոքր խաչքարի վրա երկու տող»:

Նաեւ ականավոր գիտնականը հավաստում է, որ հենց այս խաչքարի կողքին էլ դրված եղել արամեերեն արձանագրությամբ Արտաշիսյան սահմանաքարի բեկորը, որը եւ իր միջոցով տեղափոխվել է Հայաստանի պատմության թանգարան:

Մատուռի հարավարեւմտյան կողմում լեռան գագաթին երեւացող կիկլոպյան ամրոցի պարիսպների հետքերն են, հյուսիսում, ինչպես ասիլո մեջ փռվում է ողջ Վաղաշենի, Սեւանա լիճը եւ Արեւելյան Սեւանի ու Արեգունու լեռները, Արեւմուտքում՝ Մարտունի քաղաքն ու շրջակա գյուղերը, Գեղամա հզոր լեռնավահանը:

Իսկ Արեւելյան կողմում Աստղածոր գյուղի տներն են, որոնց հարավային կողմում, ծորի մեջ, արդեն Աստղածորի Սուրբ Հռիփսիմե մատուռն է, որի արեւմտյան բարձունքում, հարթության վրա, խաչքարերի մի ամբողջ դաշտ է փռված:

Ահա այսպես, այս հինավուրց հողի ամեն մի մետրի, ամեն բարձունքի, լեռնափեշերի վրա մի գաղտնիք կա թաքնված, տիեզերական մի զորություն ու խորհուրդ, ձգողական մի ուժ:

Վաղաշենի Սուրբ Հռիփսիմե մատուռից դեպի հարավարեւմուտք, լեռնագագաթներին, մի քանի կիկլոպյան ամրոցներ կան, որոնց կանդորդառնաճաճ մեր առաջիկա համարներից մեկում:

Խոսքով Խաչքարյան

ՄՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ստեփանոս Օրբելյանի «Հայոց պատմություն» գրքում, 5-րդ դարում կատարված իրադարձությունների հետ կապված, կա հիշատակություն. «Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, Տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել...»: Ստ. Օրբելյանի հիշատակած Կապան բնակավայրը գտնվում է ներկայիս Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից դեպի Քաջարան տանող ճանապարհի ձախակողմյան ոչ բարձր բլրի վրա՝ Ողջի գետի աջ ափին:

Տեղացիները քաղաքատեղին, որն այժմ ամբողջությամբ անտառապատ է, կոչում են «Տանձու լենջ»: Այստեղ դեռեւս 5-րդ դարում գոյություն է ունեցել Սյունյաց իշխանների բնակավայր-ամրոցը, որը 10-րդ դարում արդեն Սյունիքի թագավորների նստավայր-մայրաքաղաքն էր: Մինչ այդ էլ Կապանը եղել է իշխանանիստ. Աշոտ Երկաթ Բագրատունի արքայի օրոք (915-930թթ.) Կապանի տերն է եղել Չազիկ Երրորդ իշխանը, որն ուներ 2 որդի՝ Ջեւանշեր եւ Վահան: Ստ. Օրբելյանը «Սյունիքի պատմություն» գրքում, հիշատակելով արաբ զորավար Նադիր չարագործությունների մասին, գրում է. «Այս օրերին ծաղկում էր այս իշխանների ազգական Չազիկ մեծ իշխանը՝ Սիսական տոհմից՝ լի ամենայն բարեպաշտությամբ, որը բաժին ուներ Բաղաց աշխարհին ու Կապան քաղաքը: Բազմաթիվ բարեգործություններից հետո նա վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ՝ ժառանգ թողնելով Ջեվանշիրին եւ Վահանին՝ Վահանավանքի կառուցողին: 958 թ. Կապան է այցելել Անանիա Ա Սոկացի (ծ. թ. անհայտ՝ մահացել է 968թ.) Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Այս առթիվ Ստ. Օրբելյանը գրում է. «Իսկ ինքը գնաց Կապան քաղաքը: Նրան ընդառաջ ելնելով բանադրված Ջեվանշիր իշխանը՝ զոջմամբ խոստովանեց իր մեղքերը: Նույնպես եւ եկավ Սյունյաց գահերեց իշխան Վասակը՝ Աշոտի որդի Սմբատի որդին, գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ: Այսպիսով



միասին կաթողիկոսից իրենց հանձնարարների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրեցին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա...»: Այսպիսով, ավելի քան 700 տարի Կապան քաղաքը եղել է Սյունիքի կենտրոնը՝ շեն ու մարդաշատ: Կապանից ոչ հեռու՝ հարավարեւմտյան կողմում՝ Ողջի գետի ձախ ափին, միջնադարում գոյություն է ունեցել Սյունիքի հզոր ամրոցներից Բաղաբերդը, որի ավերակները պահպանվում են՝ զրեթե ամբողջովին ժայռակերտ բլրի վրա: Այս հատվածում Ողջիին է միանում Գիրաբաղ գետակը: Սակայն մեր երկիրը մշտապես է եղել պայքարի մեջ տարբեր թշնամիների հետ: Հաճախ նաեւ անմիաբանությունն է եղել պարտությունների պատճառ: Արաբական արշավանքներից հետո գալիս է նոր թշնամին՝ սելջուկ-թուրքերը: Կապան քաղաքի ու ամրոցի մասին մի քանի անգամ հիշատակում է պատմիչը: «Կապանի ավերման ու բերդերի գրավման պատճառը. Բաղաց թագավորության իսպառ վերացումը եւ Սիսական տոհմի վերջը» գլխում Ստ. Օրբելյանը գրում է. «Այն տարում, երբ Հայոց հինգ հարյուր հիսուներկու թվականն էր (552+551=1103թ.), եղավ Կապան գավառի եւ Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների եւ իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի թղթերից, որ գրել էր հույակապ Անի քաղաքում...»: Այնուհետեւ պատմիչը գրում է պատճառների մասին՝ կարելորդներից համարելով Սենեքերիմ թագավորի՝ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան գնալը, Մելիքշահ սուլթանին հանդիպելը եւ նրա չար ծառաներից Չորթմանի հետ խնդիրներ ունենալը: Նույն 1103 թվականին հիշյալ Չորթմանը, Մելիքշահի եւ նրա որդի Բեկիարուխի մահից հետո մեծ զորքերով հանկարծակի հարձակվում է Կապան քաղաքի վրա: Քանի որ Կապանը գտնվում է ավելի բարձր ու հիմնականում ժայռակերտ սարերի արանքում, Չորթմանը նույն սարերից է հարձակվում քաղաքի վրա: Օրբելյանը նկարագրում է այդ հարձակումը. «Նախ բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր հնձորոգլխին»: Այդ ժամանակ քաղաքի բնակչությանը կոտորել են, բայց ամրոցը թշնամին չի կարողացել գրավել: Կապանը վերջնական գրավվել է




թշնամու կողմից ու ավերվել Հայոց հինգ հարյուր յոթանասունհինգ թվականին(1126թ.): «...Եկավ ամիր Հարունը եւ բնաջնջեց Կապանի տունն ու Արեւիք գավառը, գրավեց Կապանքերդը ու Բաղակաքարը. վերջին վանքն էր, որտեղ հավաքված կային բազմաթիվ սրբություններ...»,- գրում է Ստ. Օրբելյանը:

Այդ օրվանից էլ Սյունիքի թագավորության մայրաքաղաքը կորցրել է իր նշանակությունը, լքվել ու ամայացել: Այդ ժամանակ Սյունիքի թագավորությունը, ըստ Ստ Օրբելյանի ունեցել է 43 բերդ, որոնցից 12-ը եղել են անվանի, 48 վանք, 1008 գյուղ, իսկ մայրաքաղաքը Կապանն էր: Մինչեւ 1170 թվականը թշնամուն դիմակայել է հզոր ու անառիկ Բաղաբերդը: Սակայն Օրբելյանը գրում է. «619 թվականին (1170թ) Աստված կրկին բարկացավ մեր Բաղաց աշխարհի ու Սյունյաց նահանգի վրա եւ բոլորի ապավեն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետեւ խաբեական խոսքերով խաբեց աշաղկազի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց Բաղաբերդը...»:

Վերջերս Կապանում էի, եղա եւ Բաղաբերդում եւ «Կապան» հնավայրում: 2 տեղում էլ կատարվում էին հնագիտական ուսումնասիրություններ ու պեղումներ: Բաղաբերդում նշված աշխատանքները, որ իրականացնում էր ՀՀ ԿԳՄՄՍ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախումբը՝ Ավետիս Գրիգորյանի ղեկավարությամբ, այս տարվա համար արդեն ավարտվել են: Իսկ Կապան մայրաքաղաքի հնավայրում պեղումները, որը կատարում է ՀՀ ԳԱՀ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ հնագետ Գազիկ Սարգսյանի ղեկավարությամբ, դեռեւս շարունակվում են:

ՋՈՐՈՒՄ ԸՈՔՈՅԱՆ



ԳԱՎԱՌԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԿՈՒ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄԸ ԸՆԹԱՑԻՄԵՋ Է

ՀՀ կառավարության կողմից իրականացվող Հրատապ ծրագրերի շրջանակներում մեկնարկել է ընթանում են Գավառ քաղաքի Կարելագործերի-6 եւ Ագատության 2-րդ փողոցի 4-րդ փալուղու 2-րդ բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Գավառի բազմաբնակարան երկու շենքերի տանիքների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 43 միլիոն 800 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներ:

Ոչնչեցնելու յուրաքանչյուրի տանիքների հիմնանորոգվող մակերեսը կազմում է 934 քառակուսի մետր:

Ծրագրով նախատեսված է ամբողջությամբ փոխել տանիքների փայտյա մասը, տեղադրել ցինկապատ թիթեղ, նոր ջրհորդաններ, իրականացնել անհրաժեշտ այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նա-



խատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Երկու շենքերի տանիքներն էլ քանդվել էին 2025 թվականի գարնանային ուժեղ քամիների հետևանքով: Հասցված վնասերը մեծ չափեր էին ընդգրկում, ուստի եւ տանիքների հիմնանորոգման անհրաժեշտություն էր առաջացել: Այս ծրագրի իրականացման արդյունքում բազմաբնակարան երկու շենքերի տանիքներն ամրապնդվել են մնալու կաթոցների ու քայքայման վտանգներից:

Ավարդ Մանուկյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՈՋԱԿՄԱՆ ՕՐԸ

Արդեն երկրորդ անգամ Հայաստանում հոկտեմբերի 17-ը նշվում է որպես Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման միջազգային օր, որի շրջանակներում էլ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության օրվան նվիրված միջոցառումները մեկնարկեցին Սեւանի թիվ 2 «Զարթոնք» մսուր-մանկապարտեզում: Դաստիարակ Լիլիթ Մարգարյանի՝ միջին խմբի սաները դաստիարակի հեղինակած «Սեւանի խոսող ձկնիկը» գրքի միջոցով ծանոթացել են Սեւանա լճի ծագմանն ու կենդանական աշխարհին:

Միջոցառումը շարունակվել է Սեւանի կենտրոնական գրադարանում, որտեղ կազմակերպվել էր «Պահպանենք ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքները» թեմայով զրույց-քննարկում մասնակցությամբ Սեւանի Վ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտների: Ցուցադրվել է օրվան համահունչ ֆիլմ, որին հաջորդել են ազգային խաղերի ներկայացումները:



Սեւանի Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոցում կազմակերպվել է Տառատեսակների ցուցա-

հանդես, որն ուղեկցվել է տառերի եւ տառատեսակների օգտագործման, դրանց կիրառման վերաբերյալ ճանաչողական տեղեկատվական նյութի տրամադրմամբ:

Սեւանի Վ. Մարգարյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել էր համերգային ծրագիր՝ մասնակցությամբ դպրոցի սաների եւ դասատուների:

Համերգային ծրագրին ներկա են եղել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Զարուհի Ազնաուրյանը, հիմնադրամի աշխատակիցներ, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչները, ՀՈԱԿ-ների տնօրեններ, աշխատակիցներ, ծնողներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման միջազգային օրն ամփոփել է «Նկուղ» հարթակում, որտեղ «ՍեւանաՑԱՆՑ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում ոլորտի մասնագետների եւ փորձագետների հետ:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ՇԻՐԱՋԻ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԲԱՆԱԿԱՐԱՆԱԿԱՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ



Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Շիրագի փողոցում արդեն ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները, որոնք իրականացվել են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Սեւանի Շիրագի փողոցի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել էին 2025 թվականի օգոստոսից: Մինչեւ հոկտեմբեր

կում է 9995 քմ. տարածք:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 180 միլիոն 193 հազար 680 դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Ճան-Շին» ՍՊԸ-ն:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ Յ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԿՈՎԵԼ Է ՆՈՐ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի առողջության առաջնային պահպանման 3 հիմնարկների՝ Ծակբարի եւ Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոնների եւ Վարդենիկի առողջության կենտրոնի համար 2025 թվականի հոկտեմբերից սկսվել է նոր շենքերի կառուցումը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, շինարարական աշխատանքներն իրականացվում են «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ:

Ծակբարի ԱԱԴԿ նոր շենքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 144 միլիոն դրամ, Վաղաշենի ԱԱԴԿ նոր շենքինը՝ 143 միլիոն 100 հազար դրամ, Վարդենիկի առողջության կենտրոնի նոր շենքինը՝ 135 միլիոն 492 հազար դրամ:

Բոլոր տեղերում շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Ծակբարի, Վաղաշենի ու Վարդենիկի առողջության առաջնային պահպանման



նշանակության բուժփիմնարկները գործունեության համար չունենին սեփական տարածքներ ու արդի չափորոշիչներին համապատասխան պայմաններ: Այդ անհրաժեշտությունից ելնելով էլ ՀՀ կառավարությունը գործնական քայլեր է ձեռնարկում՝ խնդրին արմատական լուծում տալու նպատակով: Նշեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանը:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԵԼ Է «ՀՀ ՎԱՐՋԱՊԵՏԻ ԳԱՎԱՐ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՂԻ ՄՐՁԱՆՈՐՈՎՄԱՆ ՓՈՒԼԸ

2025 թվականին անցկացվող «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարը կազմակերպվում է առաջին անգամ:


Մրցաշարը կազմակերպում է անցկացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը՝ համագործակցելով «Լողի հայկական դաշնություն» մարզական հասարակական կազմակերպության հետ:

Լողի մրցաշարն անցկացվում է 2 տարիքային խմբով՝ 3-6-րդ եւ 7-12-րդ դասարանների աշակերտների միջեւ, եւ երկու փուլով՝ մարզային եւ եզրափակիչ, որին կարող են մասնակցել համարապետության բոլոր հանրակրթական դպրոցների աշակերտները, ովքեր լողով զբաղվելու համար հակացուցում չունեն:

Գեղարքունիքի մարզային փուլին հայտ ներկայացրած 37 դպրոցականները, մարզում փակ լողավազների բացակայության պատճառով, մրցումներն անցկացրել են Ծաղկաձորի մարզական համալիրում:

Փոքր տարիքային խմբի մասնակիցները մրցել են 50, իսկ մեծերը՝ 100 մետր տարածությունում՝ ազատ ոճով:

Մրցումների ամփոփումից հետո մրցանակային տեղեր գրաված մասնակիցներին ՀՀ ԿԳՄՍ



Նախարարի խորհրդական Արման Անտոնյանը հանձնել է համապատասխան կարգի հավաստագրեր:

Հաղորդներից կծեավորվի մարզի հավաքական թիմը, որը 2025 թվականի նոյեմբերի 22-ին կմասնակցի «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարի հանրապետական փուլին:

Գեղամ Չարվադարյան

ՎԱՐՍԵՐՈՒՄ ՍՈՒՐՎԵՆՑԻՈՆ ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Վարսեր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվում է ոռոգման ցանց, հիմնանորոգվում 3-րդ փողոցը:

Վարսերի ոռոգման ցանցը ներառում է 6735 գծամետր երկարություն:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 130 միլիոն 996 հազար 750 դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը: Ծրագիրն իրականացվում է «ԱՍ-777» ՍՊԸ կողմից:

Վարսերում գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը նպատակային դարձնելու, գյուղատնտեսությունը զարգացնելու, բնակիչների կյանքի որակը եւ սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու նպատակով իրականացվող ծրագիրը հնարավորություն է ընձեռնելու՝ լուծել սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ, ունենալ աշխատանքին համարժեք արդյունք:

Այս ծրագրի շինաշխատանքներին զուգահեռ մեկնարկել են նաեւ Վարսեր բնակավայրի 3-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է 10406 քմ տարածքի ասֆալտապատում եւ բարեկարգում:

Վարսերի 3-րդ փողոցի ասֆալտապատման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 127 միլիոն 989 հազար 600 դրամ՝ համայնք-պետություն 50-ական տոկոս համաֆինանսավորմամբ: Շինաշխատանքներն իրականացվում են «Ճան-Շին» ՍՊԸ կապալառու կազմակերպության կողմից:

Երկու ծրագրերի դեպքում էլ շինաշխատանքները նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

Արմինե Ղուկասյան

ՄԵՐ ՄԻՐՈ ԱՇՈՒՆԸ



Գունագեղ աշնան տերևաթափին Քեզ հետ ծառուղով ես ծենել կուզեմ, Դոգիդ փայփայող իրիկնաքանուց Իրար խառնվող ծաներդ կուզեմ:

Ունքերը կիտած այն ծեր ուռենու ճյուղերից քեզ ես մի պսակ հյուսեմ Ու աշնանային մեղեդու ներքո Իմ պարտեզի մեջ քեզ թագադրեմ:

Ապրենք սիրո մեր աշունը հրաշք, Ու խանդավառվենք գույներով պես-պես, Երգեմ քեզ համար հոգեբուխ մի երգ, Դառնաս իմ օդն ու հացը հանապազ:

Աշնան արևից մի շողք գողանամ, Դենքիդ ես լուսե երազներ գծեմ, Որ մութ օրերում՝ պաղ ու դժնդակ, Քո տաք հայացքից նորից կյանք առնեմ:

Միլենա Դարբինյան
Գավառ

16 ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԱԴ-ՀԻՐՅՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ ԵՎ ԶԵՆՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Գեղարքունիքի մարզի 16 համրակրթական դպրոցներում ընթանում են մարզադիվիզների վերանորոգման եւ ջեռուցման կենտրոնացված համակարգերի տեղադրման աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, ՀՀ կառավարության կողմից ֆինանսական միջոցներ են հատկացվել Այգուտի, Ջովաբերի, Սեւանի N 2, Նորատուսի N 3 մ, Ծափաթաղի, Նորատուսի N 2, Շողակաթի միջնակարգ եւ Նորաշենի հիմնական դպրոցներին՝ ջեռուցման տեղակայման, Վարդենիկի N 1, Ճամբարակի N 2, Վարդենիսի N 4 հիմնական եւ Սեւանի N 6, Գանձակի N 1, Գանձակի N 2, Գավառի N 8, Լճափի միջն դպրոցների մարզադահլիճներում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Մարզադահլիճների հիմնանորոգման նպատակով հատկացված գումարը կազմում է 123 միլիոն 612 հազար դրամ, ջեռուցման համակարգերի կառուցման նպատակով հատկացված գումարը՝ 118 միլիոն 936 հազար դրամ:

Բոլոր տեղերում էլ այժմ ընթանում են շինարարական աշխատանքներ, որոնք ավարտվելու են այս տարվա ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ես Ռազմիկ Գարեգինի Ավդակյանս, ներողություն եմ խնդրում Հայկ Աշոտի Սարիբեկյանից»

«Ես, Ռազմիկ Գարեգինի Ավդակյանս, 2024 թվականի հունիսի 5-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղում Հայկ Աշոտի Սարիբեկյանի վերաբերյալ կատարել եմ վիրավորական արտահայտություն, ինչի համար ներողություն եմ խնդրում Հայկ Աշոտի Սարիբեկյանից»

ՎԱՐԴԱՋՈՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱՏԱՐ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդածոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա սեպտեմբերից սկսվել եւ ընթանում են ոռոգման ջրատար ցանցի կառուցման աշխատանքները:

Վարդածորի վարչական ղեկավար Մաքսիմ Ավետիսյանի տեղեկացմամբ՝ Վարդածորի ոռոգման ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 86 միլիոն 370 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման ջրատար ցանցի կառուցում Վարդածորի «Օգորներ» կոչվող տարածքից սկսվող եւ գերեզմանատան մոտ ավարտվող առվի վրա, 6, 3, 23, 26, 39-րդ փողոցներում ու Ալաշկերտի փողոցի մի հատվածում, շուրջ 6 կիլոմետր ընդհանուր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով:

2025 թվականի հոկտեմբերի 15-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտված են շուրջ 50 տոկոսով:

Շինարարությունը նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում



է «Մեղիսոն էյբլ» ՍՊԸ-ն:

Ծրագրի շահառու են հանդիսանում Վարդածորի ընդհանուր տնտեսությունների կեսը, որոնց եկող տարվանից ոռոգման ջուրը կնստակարարվի ժամանակին եւ առանց կորուստների:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐԴՎԵԼ Է ԱՍՏՂԱՋՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՄՈՒՏՔԻ ԶԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԸ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղածոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի

շրջանակներում հիմնանորոգվել է Աստղածորի գերեզմանոցի մուտքի ճանապարհահատվածը:

Աստղածորի վարչական ղեկավար Արթուր Ալեքսանյանի տեղեկացմամբ՝ Աստղածորի գերեզմանոցի մուտքի ճանապարհահատվածի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 17 միլիոն 779 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է 53 մետր երկարության ու 1,5 մետր բարձրության հենապատի կառուցում եւ շուրջ 1500 քառակուսի մետր մակերես զբաղեցնող ճանապարհահատվածի ասֆալտապատում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոս ամսից եւ հոկտեմբերի 15-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ՎՍԳ ՔԱՍՓՆԻ» ՍՊԸ-ն:

Ծրագրի իրականացման արդյունքում բարելավվել է Աստղածորի գերեզմանոց տանող ճանապարհը եւ մուտքը:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՈՒՄ ԲԱՅՎԵԼ ԵՆ ՀՈՒՇԱՆԿՑՈՒՆՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Ռաֆիկ Եսայանի անվան քաղաքային մարզադպրոցում տեղի է ունեցել հուշանկյունների բացում մվիրված Վարդենիս համայնքի սպորտի նվիրյալ մարզիչներին եւ մարզադպրոցի լավագույն մարզիչներին ու մարզիկներին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միաժամանակ շահագործման է հանձնվել կապիտալ վերանորոգված եւ կահավորված հանդերձարանները: Շինաշխատանքները հովանավորել է «ՍՕՍ» արեւելքի քրիստոնյաներ» կազմակերպությունը:

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա են եղել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, «ՍՕՍ» արեւելքի քրիստոնյաներ» ոչ առեւտրային կազմակերպության թիմի ղեկավար Սարգիս Հակոբյանը, Ծրագրերի պատասխանատուի տեղակալ Նոնա Ասրյանը, Վարդենիսի ծրագրերի ղեկավար Արկադի Մարտիրոսյանը, մարզադպրոցի տնօրինությունը, աշխատակազմը, հյուրեր:

Վարդենիսի քաղաքային մարզադպրոցը շատ հարուստ պատմություն ունի, արձանագրված հաջողու-

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻՆ ՆՎԻՐՅԱԼ ՄԱՐԶԻԶՆԵՐԸ



թյուններ ու ձեռքբերումներ, ու շատ տեղին է, որ բացվել են այս հուշանկյունները՝ մեր ամուսն կամ պատանի մարզիկներին քաջալերելու, մարզադպրոցի պատմությունը հավերժացնելու համար, ներկայացրեց Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

ՄԻՇՏ ՀԻՇՎՈՂ ԱՆՈՒՆ



Կյանքից անժամանակ հեռացել է Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Մակիչի Ավետյանը:

Արմեն Մակիչի Ավետյանը ծնվել է 1995 թվականի սեպտեմբերի 18-ին:

2001-2012 թվականներին հաճախել է Գեղամասարի միջնակարգ դպրոց:

2013 թվականի գորակոչվել է Հայոց բանակ: 2017-2019 թվականներին աշխատել է Գեղամասարի համայնքապետարանում, որպես առաջին կարգի մասնագետ(օպերատոր):

2019-2022 թվականներին նշանակվել է Գեղամասար համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար, 2022-2025 թվա-

կաններին՝ Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար:

Ամուսնացած էր, ունի 3 անչափահաս երեխա:

Մեր ցավակցությունն ու զորակցությունն ենք հայտնում Ավետյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին՝ մեր սիրելի գործընկերոջ եւ ընկերոջ կորստի կապակցությամբ:

Արմեն Ավետիսյանի գործն ու անունը միշտ վառ կմնան մեր հուշերում

Վարդենիսի
համայնքապետարան